

Լուսինե Համբարձումյան–Մյուլլեր,-Մայրլ Առլենը և նրա վիպաշխարհը, Եր., «Ջանգակ», 2012, 192 էջ*:

Կարդալով Լուսինե Համբարձումյան–Մյուլլերի «Մայրլ Առլենը և նրա վիպաշխարհը» մենագրությունը՝ արդեն ո՛րերորդ անգամ համոզվում ենք, թե ինչ դժվարությամբ է դեպի հայ ընթացողը բացվում Մայրլ Առլենի (Տիգրան Գույումճյանի) գրական հարուստ աշխարհը, որքան աններելիորեն քիչ է մեր ճանաչողության սահմանը, ի՛նչ անհանդուրժող ենք անցյալներից հանիրավի ժառանգված կարծրատիպ մտայնությունների առջև:

Ուստի այդ ամենը հասկանալու համար հարկ ենք համարում համեմատական մեթոդի օգնությամբ վեր հանել Մայրլ Առլենի անցած դժվարին ուղին, ինչը հնարավոր է իրականացնել՝ մեկնությունը գուգահեռելով իր կրտսեր ժամանակակից, աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանի հետ:

Միացյալ Նահանգներում բնակվող Լուսինե Համբարձումյան–Մյուլլերը իր աշխատանքում փորձել է կոտրել այս «հին», իրականում չհնացող, մեկուսի չափանիշները: Եվ այստեղ է իր գիտական մոտեցման նորարարությունը, որին հասել է գրքի գիտական խմբագիր, **պրոֆ. Սուրեն Գանիեյանի** տևական աշխատանքի շնորհիվ: Մենագրության հեղինակը ականա ստիպված է եղել վերականգնելու գրողի դիմանկարը՝ վերականգնելով արձակագրի հոգեբանական քննության եղանակի, կնոջ ներաշխարհի բացահայտումի, գրական զարգացումների անգլիական գնահատությունների անխաթար ու ճշմարիտ համապատկերը, ցույց տալով այն մեկից ավելի խոչընդոտները, որոնք տարբեր առիթներով կանգնել են օտարագրի՝ դեպի Հայաստան հասնող մուտքի ճանապարհին: Հայ գրական ավանդույթի վրա ձևված խոր ճանաչողական մեկնության են ենթարկվել Ս. Առլենի «Անգլիահպատակ մարդու խոստովանանքը», «Կանաչ գլխարկ», «Լիլի Քրիսթին», «Մահկանացու մարդը» վեպերն ու վիպակները, պատմվածքների շարքերն ու ժողովածուները, որոնց մեջ լավագույնները, մեր կարծիքով, «Մանուկները անտառում» և «Ծոված թագն» են: Փաստական տվյալների հիման վրա վերհանված է խոշոր գրողի կենսագրական-ստեղծագործական ուշագրավ ուղին: Ողջունելի է հատկապես Մայրլ Առլեն Կրտսերի հետ հանդիպումների, հարցազրույցների այն աշխատատար, դժվարին ուղին, որն անցել է գրքի հեղինակը՝ գուգահեռաբար շրջանառության մեջ դնելով «դուրսեցի» որդու և հոր բարդ, ոչ միանշանակ հարաբերությունները, մասնավորապես ցրելով այն թյուր տպավորությունը, թե որքան հայրը հեռացրել է որդուն ազգային արմատներից, այնքան վերջինս ավելի ամուր է ոտքը դրել նախնիների հողի վրա,

Գ (Ժ) քաղեր, թիվ 2 (38) ապրիլ-հունիս, 2012

ՎԵՄ համահայկական հանդես

*Ընդունվել է տպագրության 8.06.2012:

թե որքան հոր գրվածքներում Հայաստանն ու հայը մշուշոտ են եղել, մերժելի կամ այպանելի, այնքան պայծառ է եղել որդու ստեղծագործություններում Արարատի խորքային ընկալումը: Լ. Համբարձումյան–Մյուլլերը հերքում է նման ոչ գիտական մտադրությունները, նախ և առաջ՝ Կրտսեր Առլենի «Տարագրյալներ» (1970) ծավալուն փորձագրության ծալքերը թափանցելով ու նորովի, թարմ, անկանխակալ մեկնություններով, հոր գրական «կերպարի» գիտական հաջող մատուցմամբ:

Աշխատանքի շահեկան կողմերից մեկը գրական տարբեր միջավայրերի միահյուսված քննությունն է՝ լոնդոնյան եւ ամերիկյան տիրապետող շրջանակով, որոնց մեջ է ձևավորվել ու կազմվել Մայքլ Առլենի պայծառ տաղանդը: Շփումները, բնականաբար, բազմաշերտ են՝ Նենսի Քյունարդի գրական սալոններից մինչև Դեյվիդ Հ. Լոուրենս, Սկոտ Ֆիցջերալդից մինչև Էռնեստ Հեմինգուեյ ու Վիլյամ Սարոյան:

Անհնար է շրջանցել երկու աշխարհառչակ գրողների՝ Մայքլ Առլենի և Վիլյամ Սարոյանի կյանքի ու ստեղծագործական բարդ ուղիների և հարաբերությունների ընթացքն ու ակնհայտ խաչաձևումները, խառնվածքի ու աշխարհաճանաչողության տարբերակիչ գծերը: Տիպաբանական զուգահեռները իրար են առնչում ոչ միայն երկու հզոր ներուժ ունեցող անհատականություններին, այլ նաև հայ, ռուս և արևմտյան մի շարք գրողների ստեղծագործական փորձից ելած գրական ուղղության տրամաբանական այն խորքը, որն ամբողջականություն է հաղորդում Լ. Համբարձումյան–Մյուլլերի աշխատությանը:

Նախ, հիշենք կենսագրական ընդհանրությունը, երկուսն էլ դեմ էին դուրս եկել ընտանեկան եւ ազգային ավանդույթին, նոր մշակույթի տնկիներ էին: Անգլիայում հաստատվելուց հետո Առլենի հայրը՝ Սարգիս Գույումճյանը, որդու ապագան տեսնում է իր հիմնած կերպասի քիզնեսի շարունակման մեջ, մինչդեռ «նրա ձգողական աշխարհը ուրիշ, հոգևոր արմատ ուներ»¹: Սարոյանի դեպքում հորորտորը Արամ քեռին էր, որը լսել անգամ չէր ուզում պատանու գրողական հակումների մասին: Արդյունքում երկուսն էլ հեռանում են իրենց տնից, Մայքլ Առլենը ուսանում է Լանքաշիրի մոտ գտնվող Վուստըշըրի Մալվերն քոլեջում, այնուհետև՝ շոտլանդական Ս. Անդրեաս, որոշ ժամանակ անց՝ Էդինբուրգի համալսարաններում: 1913–ին նա վերադառնում է, հաստատվում Լոնդոնում՝ համոզված, որ գրականությունը իր համար սահմանված աշխարհն է:

Ուրիշ է Սարոյանի ուղին. նա ևս առժամանակ լքում է իր հարազատներին՝ բախտ փնտրելով Ման-Ֆրանցիսկոյում, Նյու Յորքում, Լոս-Անջելեսում: Ջրաղվում է ինքնակրթությամբ, անհագուրդ կարդում ձեռքի տակ ընկածը: Փողոցը դառնում է յուրօրինակ կյանքի դպրոց:

Ինչպե՞ս կարելի է չնկատել ապրված ծանր դժվարությունները, որ երկու գրողներն էլ ունեցել են սկզբնական շրջանում: Մայքլ Առլենը «Լոնդոնյան արկածախնդրություն» վիպակում այս առիթով գրում է. «Ես շատ դառնացած եմ լոնդոնյան առաջին ամիսների համար և հեշտությամբ չեմ ների Լոնդոնին: Եվ եթե ինչ-որ երիտասարդ ինձ փորձի ասել՝ ի՞նչ լավ ժամանակներ էին իր առաջին մենակյաց օրերը մարդկանց մեջ, և թե ինչքան է վայելել փողոցներով աննպատակ շրջելը, ես կշրջվեմ դեպի այդ երիտասարդը և կայապանեմ խաբեության, հիմար

1 Լուսինե Համբարձումյան–Մյուլլեր, Մայքլ Առլենը և նրա վիպաշխարհը, Եր., «Ձանգակ», 2012, էջ 26:

թվացող խոսքերի համար...»²:

Մարոյանի պատմվածքներից և փորձագրություններից («Ճոճաճողով սավառնող խիզախ պատանին», «Յուրտ օրը», «Չեմ մահանում») պարզ էր այլևս, որ նա «խիզախ պատանու» նման պետք է վաստակի «ասպրելու թույլտվության իր իրավունքը»:

Նույնքան շնորհալից էր նրանց մուտքը գրական ասպարեզ. Մարոյանն իր առաջին պատմվածքով հաստատեց գրողական տեսողության բարձր շնորհը: Առլենին նույնպես վիճակված էր ըմբռնել փառքի քաղցր «փշրանքները», սակայն մի փոքր ուշ, ոչ թե առաջին՝ «Լուսարձակի արկածախնդրություն» վիպակի, այլ «Կանաչ գլխարկ»-ի ու հետագա ստեղծագործությունների շնորհիվ: Ինչպես նշում է ամերիկյան առլենագետ Հերրի Քեյշիանը «Մայքլ Առլեն» մենագրության մեջ. «Կարելի է ասել, Տիգրան Գույումճյանը գրական միջավայր մտավ «ետին դռներից», սակայն այդ ճանապարհով գտավ գրականություն եկող առավել հետաքրքիր անձանց»³:

Հայագգի երկու գրողների բնագիրը դյուրին է յուրացրել անգլիագիր ընթերցողը: Նրանք աչքի են ընկել ընթերցողի նկատմամբ հարգալից վերաբերմունքով, մտերմության կոչող ոճավորումով, դիտել են նրան պարզ գրուցակից, իրենց հավասար մեկը: Այս հանգամանքը նաև՝ խթանել է իրենց, որովհետև նրանց ընդհանուր հատկանիշներից մեկը եղել է արագագրությունը, քանի որ մտածել են ավելի ու ավելի հաճախ բացել ստեղծագործական երկխոսության դուռը: Մարոյանը պատմվածք գրում էր «միջինը»՝ մեկ ժամում, իսկ Պուլիտցեյան մրցանակի արժանացած «Չեր կյանքի ժամանակը» (1939)՝ երկու ամսում: Հետաքրքիր է, բայց փաստ, որ Մայքլ Առլենը իր «Կանաչ գլխարկը» (1924) աշխարհահռչակ վեպը նույնպես գրել է երկու ամսում:

Լ. Համբարձումյան-Մյուլլերը Առլենի մասին նշում է. «Հիրավի, բոլորին զարմացնում էր գրողի նման արագությունը, որ առաջին հերթին հոգեբանական գործոնի հետևանք էր: Դա հավասարագոր էր կենսական ուժի ձեռքբերման, ինքնավստահության, գրական փառքին տիրանալու ներքին ճանաչման: Գտել էր երիտասարդ Տիգրանն իր կյանքի գլխավոր մայրուղին և մեծ արագություն հավաքել փորձառու վարորդի նման»⁴:

Երբ հայերեն էին թարգմանվում «Կանաչ գլխարկն» ու «Մարդկային կատակերգությունը», հեղինակների ուրախությունն էլ բնաբուխ էր, քանի որ «հայոց մայրերը» վերջապես կկարողանան ընթերցել իրենցից՝ լեզվով ու ազգային միջավայրից հեռացած «անառակ որդիների» գործերը: Արդեն ուշագրավ է, որ երկու գրողներն իրենց կարիերան սկսել են հայկական պարբերականներից. Մայքլ Առլենը 1916 թվականից պատմվածքներ էր ուղարկում «Արարատ»/ «Լուսարձակ Հայաստանի վրա» հանդեսին: Առաջիններից էր ծրագրային «Կոչ գիտակցության» հոդվածը, որի մեջ քննում էր իր ինքնությունը, ազգային արմատների հետ իր ներհակ հարաբերությունը: Իսկ Մարոյանը, օգտագործելով «Սիրակ Գորյան» կեղծանունը, իր առաջին քայլերը կատարել է «Հայրենիք» շաբաթաթերթի օգնությամբ:

«Ճոճաճողով սավառնող խիզախ պատանին» պատմվածքի լույս ընծայումից

2 Michael Arlen, The London Venture, London: Cassell and Company, 1968, p.3.

3 Herry Keyishian, Michael Arlen, Boston, Twayne Publishers, 1975, p. 16.

4 Լուսինե Համբարձումյան-Մյուլլեր, Մայքլ Առլենը և նրա վիպաշխարհը, էջ 38:

հետո Վ. Սարոյանը հավատարիմ մնաց իր անվանը, միշտ ընդգծելով ազգային պատկանելությունը: Միևնույն ժամանակ նա չէր մոռանում, որ պարտական է ոչ միայն արմատներին, այլև ամերիկյան միջավայրին՝ հողին ու ջրին:

Այնուհանդերձ, ընդգծենք, որ անգլիագիրներ Մ. Առլենի և Վ. Սարոյանի միջև գուգահեռներ անցկացնելու դեպքում ավելի աչքի են զարնում տարբերությունները, քան նմանությունները, որոնց առթիվ բերում ենք մեր նկատառումները: **Նախ և առաջ** տարբեր են նրանց բերած դիպախաղերը, կերպարների կերտման սկզբունքները, գործողությունների միջավայրերը: Ավելին, տարբեր է նրանց գրական ըմբռնումը: 1920-ական թվականների Առլենի հետաքրքրաշարժ պատմվածքների գործողությունների վայրը Լոնդոնն էր՝ իր բարձրաշխարհիկ Մեյֆերը թաղամասով, սքանչելի կանանցով, թանկարժեք մեքենաներով, իսկ Սարոյանի պատմվածքները մեծ մասամբ Ֆրեզնոյում հայտնված բազմազգ գաղթականների ու նրանց սպասումների մասին են, որոնք պահպանում են մարդկային լավատեսությունը «փոշոտ ճանապարհների» և «ստերջ հողերի» երկրում: Գրողին առաջին հերթին հետաքրքրում է գաղթական մարդու գործունը՝ իրեն ակամա թշնամի դարձած աշխարհում: Պարզ ժողովրդի առօրեական ծանր պայմանները, թվում է, պայմանավորված են երեսնականների մեծ ճգնաժամի հետևանքներով, նույնիսկ այն դեպքում, երբ Սարոյանի տարաբնույթ դիպախաղերը վերաբերում են ավելի վաղ տարիներին:

Իսկ Մ. Առլենի ստեղծած անհատապաշտ կերպարները մեզ են ներկայանում հակառակ ծայրակետից. հմայիչ կանանց տխուր ու «ներանձնական», հաճախ նաև՝ ողբերգական ճակատագրերը անբաժանելի են իրենց շրջապատող ճոխության, հարստության և շռայլ կյանքի պարզևած հաճույքների ու պարագաների մանրամասներից:

Երկրորդ ակնառու տարբերությունը, կարծում ենք, ոճի խնդիրն է: Մ. Առլենը ոչ այնքան պատմում է, որքան «զարդարում» իր պատմությունների հոգեբանական քննական ենթահողը, կանանց անտես ներաշխարհի փխրուն ու հոգեցունց տեսողությունը: Նրա «անկենդան» (Վ. Սարոյան) տիպարների ու միջավայրի կաղապարների (սխեմաների) արհեստականությունը, սրամիտ նախադրությունները, բնաբանները, թեթև հումորը արդյունք են ոճային խառն կառույցի՝ **դենդեիզմի**: Մ. Առլենի պատկերած եսակենտրոն ազնվական տղամարդը երբեք արտաքին կոպտություն չի ցուցաբերում այլոց նկատմամբ, սակայն ներքին հարաբերություններում նրա սարքած նրբին, բայց չարական խաղերը դժբախտ են դարձնում և՛ կանանց, և՛ ըստ էության՝ իրենց:

Տեղին է մատնանշել ուսուցիչ գրողներին, ովքեր գրական ազդեցություն են ունեցել Մ. Առլենի ստեղծագործական ուղու վրա՝ Դեյվիդ Հ. Լոուրենսին և Էրնստ Հեմինգուեյին: Լ. Համբարձումյան-Մյուլլերի մենագրությունը առավել մանրամասն է անդրադառնում այս հարցին, մասնավորապես Լոուրենսի՝ սկսնակ գրող Առլենին տված խորհուրդներին ու դասերին և Է. Հեմինգուեյի, Ս. Ֆիցջերալդի հետ կապերին: Հատկանշական է, որ նույն այդ անձինք երբեմն նաև անխնա քննադատության են ենթարկել հայագրի գրողին: Այդ առթիվ արձագանքի մի մոռացված, բայց հետաքրքիր փաստ է շրջանառության մեջ դնում Լ. Համբարձումյան-Մյուլլերը իր աշխատության մեջ. «Կրտսեր Առլենը այդ կարծիքը այնքան էլ չէր բաժանում, ընդհակառակը, ընդդիմանում էր. «...ես կարծում եմ, հայտարարում էր նա, Լոուրենսն է, որ զտարյուն շահագրգռություն էր

ցուցաբերում իմ հոր նկատմամբ»⁵: Ավագ Առլենի խոր համոզմամբ, Լոուրենսն է, որ օգնել է իրեն կողմնորոշվել դեպի կարճ պատմվածքի աշխարհ, ձևավորել նրա գեղարվեստական ոճի հիմնատարրերը:

Է. Հեմինգուեյից Մ. Առլենը սովորել է գրելու «թեքնիք» կառույցի մեջ հանգամանքների բազմապլան հետահայաց եւ ներկա ժամանակային գոտու քննության սկզբունքը, երբ հերոսներին նրանք նետում են ծայրահեղ, անսպասելի իրավիճակների մեջ ու ստուգում են վարքագիծ, շեղումներ, դիմադրական ոգի, մարդկայնության սահմանների առաձգականություն: Եթե Հեմինգուեյի համար դա աֆրիկյան սաֆարին է կամ իսպանական ցլամարտի նկարագիրը, Չմյուռնիայի մեջ՝ ազգային բախումների տխուր համապատկերին տրված բնութագրերը, ապա Մ. Առլենի համար բնորոշ է ծայրահեղ իրավիճակներից բխող զավեշտական, անգամ ներթաքույց ողբերգական, արկածային պարագաների քննությունը, որն ակամա փոխում է առօրյայի ընթացքը, նույն մարդու հայացքը: Հիշենք թեկուզ «Գրադարանի հոտը», «Շատախոս կինը գետնանցումի մեջ» պատմվածքները և «Այս հիասքանչ մարդիկ» պատմվածաշարի արքետիպ հերոս Ջորջ Թարլոնին:

Վերադառնալով, սակայն, Մարոյանին, որն ընթերցողին սիրով պատմում է մանկության դառը և քաղցր հիշողություններից՝ հեծանիվ քշելու, փողոցներում լրագիր վաճառելու, թարմ ձմերուկ ուտելու, խաղողի բերքահավաքի, Ֆրեզնոյի պաղ ջրի առթած անմոռաց բերկրանքը: Ինքն է հերոսը՝ ամեն օր փոփոխվող, բայց բարության սերմով, պատմական անխախտ հիշողությամբ ժամանակին կառչած անփոփոխ հայր: Հերոսը պարզության մեջ նույն, հավաքական ու մնայուն դիմագծով մարդն է՝ բացված ողջ աշխարհին: «1933» էսսեում, դատելով ոճի փայլատակումների մասին, Վ. Մարոյանն արձանագրել է. «Արձակի անգուգական ոճ. պարզ, ըստ իմաստի՝ բարդ ու խորախոր. ոչ թե այն, ինչ ասում է, այլ այն, ինչ նկատի ունի»⁶: Մարոյանը մեծ է անպատասխան հարցադրումներով: Նրա հիշատակած տարագրությունը այսօր էլ սրտի միջով է անցնում, ճեղքում մահվան բարդույթը:

Մ. Առլենի արձակում հերոսների աշխարհը ավելի մտավոր բնութագիր ունի, որի նպատակներից մեկը սոցիալական ծաղրի ուղղությունների ճշգրտումն է՝ նոր հետաքրքրություն անցյալ դարի 20-ական թթ. անգլիական գրականության մեջ: Վ. Մարոյանի պատմվածքներում նյութը տոհմիկ բնագրով դիպչում է մեր սրտին: Նա հետամուտ է կեցության զգայական խոր շերտի վերհանմանը: Իսկ սա էական հատկանիշ է:

Դիպուկ է նկատում Լ. Համբարձումյան-Մյուլլերը. «Մայքլ Առլենի ոճը շքեղ է, խաղացկուն: Հաճախ նկատելի է հեղինակի հակվածությունը՝ վեպում դիմելու ֆրանսերեն բառերի ու արտահայտությունների տիպական գործածության, որպեսզի ապահովվեն հերոսների ոճերի անհատականացումը, միջավայրի տիպական հանգամանքների, նկարագրերի ներքին հարազատությունը»⁷:

Գրողն իր ««Ա»-ով սկսվող Առլենն ու Արմենիան» էսսեն ավարտում է բարձրակարգ սրամտությամբ. «Մայքլ Արլեն պճնասէր մարդ մըն էր: Մենք վերջապէս իրարու հանդիպեցանք, երբ իր համբարը՝ տեղատուութեան, իսկ իմս

5 Michael John Arlen, Exiles, New York, 1970, p. 74.

6 Վիլյամ Մարոյան, Իմ անունն է Մարոյան, Եր., «Նաիրի», 1994, էջ 5:

7 Լուսինե Համբարձումյան – Մյուլլեր, Մայքլ Առլենը և նրա վիպաշխարհը, էջ 89:

մակընթացութեան մէջ, ծովափն ի վեր խուժելով, կը բարձրանար»⁸:

Ի դեպ, առլենագետ Հերրի Քեիշյանը «Մայքլ Առլեն և Վիլյամ Սարոյան. հայկական էթնիկական պատկանելությունն ու գրողը» հոդվածում համեմատում է Առլենի «Ծովահենություն» վեպը (1922) և Սարոյանի «Իմ անունը Արամ է» (1940) պատմվածաշարը, սակայն «Կանաչ գլխարկ» վեպի և «Չեր կյանքի ժամանակը» թատրերգության գլխավոր հերոսները, մեր կարծիքով, ավելի ցայտուն ընդհանուր գծեր ունեն. և՛ Այրիսը, և՛ Ջոն «քոքուր» են՝ դուրս շարտված կյանքի լուսանցքից, իրենք միայն գիտեն, թե ինչ փոթորիկ է մոլեգնում իրենց միայնակ հոգիներում:

Մայքլ Առլենը հայացքն ուղղում է դեպի ապագան՝ փորձելով իր ուժերը նաև գիտաֆանտաստիկ գրականության մեջ («Մահկանացու մարդը»), որը հաճախ են համեմատել Ալլըս Հաքսլիի «Խիզախ նոր աշխարհ» վեպի հետ: Ի դեպ, Հ. Քեիշյանն այն համարում է լավագույնը ողջ ստեղծագործական ներկայանակում:

Վ. Սարոյանը, ընդհակառակը, հայացքը շարունակում է պահել դեպի անցյալ, դեպի սեփական ներաշխարհ, պրպտում է ազգային հավաքական հիշողության հարուստ պաշարները: Այդ են վկայում նրա վերջին ինքնապատումներն ու հուշագրությունները («Ահա եկավ, ահա գնաց, դուք գիտեք, թե ով» (1961), «Չեմ մահանում» (1963), «Վայրեր, ուր ժամանակ եմ անցկացրել» (1972) և շատ ուրիշներ):

Ինչպիսին էլ որ լինեն երկու աշխարհահռչակ գրողների ստեղծագործական ավագանի նմանություններն ու տարբերությունները, մի բան հաստատ է. ազգային ենթահողի նկատմամբ պատասխանատվության չափը էապես պայմանավորել է նրանց գրական հայացքների հունը, ճակատագրերը, այս բազմիմաստ կյանքի ու կեցության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքը:

Ռուզան Գ. Ասատրյան
Բանաս. գիյ. թեկնածու

Summary

Ruzan G. Asatryan, - Lusine Hambardzumian – Muller, “Michael Arlen and his World of Novels” Yerevan, “Zangak,” 2012, 192 p.

Lusine Hambardzumian’s book, edited by Suren Danielian, is a unique opportunity for Armenian readers to discover the real Michael Arlen, an Armenian whom we have known through the perceptions of other writers (who often blamed him for having changed his name). Thanks to this successful and valuable monograph it has become possible for us to reveal some basic parallels between the two world famous writers whom the Armenians will always be immensely proud of.

⁸ Նույն տեղում, էջ 319: